Տ. ՆԱԹԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(20 փետրվարի 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին,
եւ զոգի ո՛չ կարեն սպանանել։
Այլ երկեր՛ուք դուք առաւել յայնմանէ՝ որ կարաւղն է
զոգի՛ եւ զմարմին կորուսանել ի գեհենի»
(Մատթ. Ժ. 28)։

Այսօր, սիրելի՛ քույրեր եւ եղբայներ,

Մենք ազգովի նշում ենք Ս. Վարդանանց հիշատակի տոնը, նշում ենք ոչ թե սգալով, այլ ուրախությամբ, որովհետեւ նրանք, լինելով մեր բարեխոսը, այսօր երկնքում ցնծում են մեզ հետ միասին։

Այս տողերը, որ քիչ առաջ ընթերցեցի, Մատթեոս ավետարանչի արձանագրած՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերն են եւ լավագույնս բացում են մեր առջեւ Վարդանանց հերոսության նվիրումի եւ սրբացման ամենակարեւոր հիմքերը։

Սրանից գրեթե 15 դար առաջ, երբ հայոց քրիստոնեությունը դեռ բավական երիտասարդ էր՝ ընդամենը դարուկես, եւ նույն ժամանակ պարսից արքա Հազկերտը որոշեց ողջ հայությանը իր հայրենիքով, երկրով, մարմնով ու հոգով միավորել իրենց հետ։ Սակայն նրան հուշեցին, որ հայի մարմինը կարելի է գերել, կարելի է սպանել, բայց հոգին՝ անհնար, որովհետեւ նրա հոգին Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոսն է։ Ահավասիկ այս եղավ պատճառը, որ պարսից արքան որոշեց հայի հոգին հավատափոխ անել, պարտադրեց հեռանալ Տեր Հիսուս Քրիստոսից եւ ընդունել իրենց կրոնը՝ զրադաշտությունը։ Եւ ի՞նչ պատասխան ստացավ. պատասխանը տվեց ողջ հայ ժողովուրդը՝ սկսած իշխաններից մինչեւ վերջին գեղջուկը՝ Պողոս առաքյալի խոսքերով. «Այս հավատքից մեզ չի կարող հեռացնել

ո՛չ մարդ, ո՛չ սուր, ո՛չ հուր եւ նոյնիսկ երկնային զորութիւնները, մենք կանք ու պիտի մնանք այն սիրոյն մեջ, որ Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոսն է» (հմմտ. Հռոմ. Զ. 35)։

Բնական է, որ պարսիկ արքային չգոհացրեց ու նաեւ բարկացրեց նման պատասխանը եւ արդեն 451 թ. ուժով, զենքով ու զորքով հարձակվեց հայերի վրա՝ վերջնականապես գերեվարելու կամ ոչնչացնելու։ Սակայն զորացյալ հավատքով ու Հիսուսով՝ հայ ժողովուրդը, ունենալով իր հավատարիմ եւ հավատավոր առաջնորդները, դուրս եկավ պատերազմի, եւ տեղի ունեցավ մեզ հայտնի՝ Ավարայրի ճակատամարտը։ Այդ ճակատամարտին մասնակից էին բոլորը՝ իշխանավոր, աշխարհական, զինվորական եւ, անշուշտ, նրանց առաջնորդող հոգեւորականությունը՝ որպես հոգեւոր առաջնորդներն ազգի, որպես Հիսուսի խոնարհ սպասավորներ ու հավատարիմ զինվորներ։

Եղիշե պատմիչը, շատ ու շատ դրվագներ ու մանրամասներ հիշելով, նշում է նաեւ այն կարեւոր խոսքը, որ մեզ համար դարեր շարունակ ոչ միայն իրականություն է, այլեւ մեր կյանքն է՝ «քրիստոնեությունը մեզ համար պարզ հավատք ու հավատամք չէ, այլ քրիստոնեությունը մեր մաշկի գույնն է»։ Եւ, բնականաբար, որեւէ ուժով ու զորությամբ այդ մաշկի գույնը փոխել հնարավոր չէ։ Տեղի ունեցավ մի ճակատամարտ, ուր ուժերի հավասարություն չկար, հսկա զորագնդերով, նույնիսկ փղերով պարսից զորքը հարձակվեց հայերի վրա, բայց հայերը մինչեւ իրենց արյան վերջին կաթիլը կենաց ու մահու կռիվ տվեցին։

Այսօր մենք հիշում ենք քաջ Վարդանին, որ զորավարն ու առաջնորդն էր, նրա 1036 զորակիցներին, որ նահատակության լուսապսակն առան իրենց վրա՝ ապահովելու համար մեր հավիտենությունն ու փրկությունը։ Այսպիսով՝ թեեւ մենք ֆիզիկապես ավելի շատ զոհեր տվեցինք, բայց հայի հոգին ու հավատքը հաղթանակեցին ու մնացին կայուն։ Եւ սրանից հետո է, որ պարսիկները դադարեցին ստիպել հայերին հավատափոխ լինել, իսկ մեր ազգը մնաց քրիստոնյա՝ իր մաշկի գույնով։

Այս է մեզ համար ամենակարեւոր դասը՝ տրված մեր սրբերի զոհողությամբ։ Սակայն, ցավոք, բոլոր ժամանակներում մեր կյանքում շարունակվում է Ավարայրը, շարունակվում է մեր հավատքի, մեր ճշմարտության եւ ազատության համար պայքարը։ Բոլոր ժամանակներում, երբ հետեւում ենք պատմության ընթացքին, տեսնում ենք, որ մենք միշտ մղել ենք այն պատերազմը, որ սուրբ Վարդանանք կոչել են՝ «վասն

հավատի եւ վասն հայրենյաց»։ Եւ այսօր էլ այդ պատերազմը շարունակվում է. շարունակվում է ճշմարտության ու կեղծիքի, հավատի ու անհավատության, արդարության եւ անարդարության, մեր հոգու ու մարմնի ազատության պայքարը։

Ցավոք, այսօր Ավարայրը ոչ միայն հայ ժողովրդինն է, այլ ողջ քրիստոնեությանը, քանի որ քրիստոնեության դեմ հարձակումներն աշխարհում ավելի ու ավելի մեծ թափ են ստանում։ Այսօր աշխարհականացված հասարակությունների մեջ տեսանելի է Քրիստոսի նկատմամբ խոր վստահության ու հավատքի լուրջ պակաս։

Եւ մեզ անընդհատ ուզում են համոզել, որ մենք ազատ ենք ու կարող ենք ազատ լինել՝ առանց Քրիստոսի, երջանիկ լինել՝ առանց հավատքի, մենք կարող ենք մեր հավիտենությունը կերտել՝ առանց Արարչի։ Մենք այսօր մտահոգություններ ու մտածումներ ունենք հատկապես մեր երկրի, մեր ժողովրդի եւ մեր երիտասարդության ապագայի համար։ Եւ բազում հարցեր են առաջանում ու ծառանում մեր առջեւ։ Առաջինը հիշելով Ս. Վարդանանց հերոսներին՝ հարց է առաջանում, թե այսօր մեր ապագա սերնդի, մեր այսօրվա երիտասարդության հերոսը ո՞վ է, ո՞ւմ նմանվելու կամքը եւ ձգտումը կա։ Մեր առջեւ ծառացած է նաեւ այն հարցը, թե որն է այսօր մեր ժողովրդի՝ հայ քրիստոնյայի պատգամը աշխարհին, ինչ ուղերձ է տալու համայն մարդկությանը իր կյանքով եւ հավատքով։

Այսօր արդյոք մենք միայն կարողությունն ունե՞նք ընդունելու օտարածին եւ օտարամուտ, այսպես կոչված, «արժեքներ», նոր տեխնոլոգիաներ, դատարկ ու սին զվարճանքներ՝ համոզելով ինքներս մեզ, որ դա է իրական երջանկությունն ու ազատությունը, թե՞ հավատում ենք մեր հոգեւոր-մշակութային եւ ազգային ունակությանը, որ մենք ինչ կարող ենք տալ ոչ միայն մեր ժողովրդին, այլեւ համայն մարդկությանը։ Ի՞նչ կարող ենք ասել նրանց, ովքեր իրենց կյանքը զոհաբերել են հանուն մեր այսօրվան ու հանուն մեր կյանքի։ Ահավասիկ բազում հարցեր, եւ ամեն մեկս պետք ունի մտորելու, թե արդյոք կարո՞ղ ենք այս ամենը հաղթահարել եւ ունենալ առանց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հավատքի եւ զորության։ Արդյոք մարդը կարո՞ղ է ինքնազոհողության գնալ, երբ չի հավատում հավիտենական կյանքին, արդյոք մարդը կարո՞ղ է սիրել իր մերձավորին ինչպես իր անձը, երբ սեր չունի Աստծու նկատմամբ։ Մեր Տիրոջ պատգամն է՝ «սիրեք միմյանց. ձեր անձի նման» (հմմտ. Հովհ. ԺԳ. 34)։ Պատգամ, որը կարծես թե օրենք է, սակայն օրենքով կարելի է չսպանել,

չգողանալ, չշնանալ, բայց սիրել օրենքով անհնար է, եթե հավատքն ու վստահությունը չունենք Տիրոջ այդ պատգամի նկատմամբ։

Սիրելինե՛րս, Ս. Վարդանանց հիշատակը եւ նրանց գործը մեզ նոր մղումների, նոր խիզախումների ճանապարհ են տալիս՝ ոգեւորելով ու ապացուցելով, որ միայն հավատքն առ Քրիստոս եւ աստվածատուր սերն են, որ կարող են փրկել մարդկությունն ու աշխարհը։ Միայն Հիսուսի հավատքն է, որ կարող է մեզ տալ իրական ազատություն, այն ազատությունը, երբ մարդ վախ չի ունենում զոհելու նույնիսկ իր անձը։

Ս. Վարդանանց տոնին հիշատակում ենք բոլոր զոհված հայ հերոսներին ու զինվորներին, եւ այսօր Հայ Եկեղեցին իր օրհնությունն ու շնորհավորանքն է բերում նաեւ բոլոր նրանց, ովքեր կրում են այդ հերոսների անունները, որ դարձել են իրենց իսկ պահապան հրեշտակներն ու բարեխոսները երկնքում։

Եւ այսօր մենք ազգովի տոնում ենք եւ գալիս ենք շնորհավորելու ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ անվանակոչության օրվա առիթով։

Վեհափառ Տե՛ր, վստահ եմ, որ կարող եմ բոլոր հայորդիների անունից շնորհավորել Ձերդ Սրբությանը՝ անվանակոչության օրվա առիթով, մաղթել, որ Ձեր պահապան հրեշտակները մշտապես բարեխոս լինեն առ Տեր, եւ Տերը առաքի ուժ եւ կարողություն՝ շարունակելու եւ հաղթանակի տանելու մերօրյա Ավարայրի ճակատամարտը, առաջնորդելու հայ ժողովրդին հավատքի հաղթական նավահանգիստը եւ մեր Հայրենիքի՝ խաղաղ ու բարօր կյանքին։

Լրանալով Ձեր գահակալության 20 ամյակը՝ մաղթում ենք, որ Տերը երկար ու արեւշատ գահակալության տարիներ պարգեւի Ձեզ, Ձեր գավազանը միշտ պահի ծաղկուն եւ Ձեր ժողովրդին՝ Ձեր իսկ օրհնության ներքո. ամեն։